**ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ № 1**
**№ ԳՀԱՊՁԲ-20-9/26-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

**ք. Երևան** *09* **-ը հոկտեմբերի 2020թ.**

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ Ն. Յոլյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և **«Դիօկսիդ» ՍՊԸ-ն**, ի դեմս տնօրեն **Է. Բաղդասարյանի,** ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև «Վաճառող», մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր՝ հիմք ընդունելով **22.01.2020թ.** կնքված № **ԳՀԱՊՁԲ-20-9/26-1** գնման Պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5, ինչպես նաև Պայմանագրին կից **14.05.2020թ.** կնքված N1 համաձայնագրի (այսուհետև՝ Համաձայնագիր) 3.4 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն փոփոխությունը (այսուհետև՝ Փոփոխություն) հետևյալի մասին.

**1. Փոփոխության առարկան**

1.1 Կողմերը, հիմք ընդունելով Վաճառողի գրությունն առ այն, որ շրջանառության ծավալների ավելացման հետ կապված վերջինս տեղափոխվել է ավելացված արժեքի հարկման դաշտ, որոշեցին Պայմանագրի 3.1 և Համաձայնագրի 2.1 կետերում կատարել փոփոխություն և «***ՀՀ դրամ***» բառերից հետո ավելացնել «, ***ընդ որում, 2020թ. օգոստոսի 21-ից հետո մատակարարված ապրանքների գինը ներառում է ԱԱՀ***» բառերը:

**2. Գինը և վճարման կարգը**

2.1 Սույն փոփոխության արդյունքում Պայմանագրի (Համաձայնագրի) ընդհանուր գինը կազմում **է 3,150,000 (երեք միլիոն հարյուր հիսուն հազար)** ՀՀ դրամ, ընդ որում, 2020թ. օգոստոսի 21-ից հետո մատակարարված ապրանքների գինը **ներառում է ԱԱՀ:** Պայմանագրի գինը ներառում է Պայմանագրի (Համաձայնագրի) կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

**3. Այլ պայմաններ**

3.1 Սույն Փոփոխությունն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը և տարածվում է 2020թ օգոստոսի 21-ից հետո կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների վրա:

3.2 Սույն Փոփոխության մեջ չնշված՝ Կողմերի Պայմանագրով (Համաձայնագրով) նախատեսված իրավունքները և պարտականությունները, Ապրանքի հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Փոփոխությունը հանդիսանում է Պայմանագրի (Համաձայնագրի) անբաժանելի մասը, կազմված է 1 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

**4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան Բագրևանդի 5
ՀՀ ՖՆԱ գործառնական վարչություն
Հ/Հ 900011144129
ՀՎՀՀ 02522157
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈԼՅԱՆ

«ԴԻՕԿՍԻԴ» ՍՊԸ
ք. Երևան, Բագրատունյաց 17շ., 46 բն.
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Մետաքս մ/ճ
Հ/Հ 163218007819
ՀՎՀՀ 02250766
տնօրեն

Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ